



ՏԻԳՐԱՆ ԱՌԵՍԱՄՅԱՆ

ՀՂՀ ֆինանսների նախարարության
հայցային աշխատանքների կազմակերպման բաժնի պետ,
իրավաբանական գիրուրյունների քեկնածու

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՆՁԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՑՆԴԻՐՆԵՐ



«Յուրաքանչյուր որ պարտավոր է օրենքով սահմանված դեպքերում, կարգով և չափով մուծել հարկեր, դուրքեր, կարարել պարտադիր այլ վճարումներ»:
Արցախի Հանրապետության
Սահմանադրության հոդված 56

Արցախի Հանրապետությունում տնտեսական և ֆինանսական ոլորտներում իրականացվող բարեփոխումների հետ կապված փոփոխություններ են իրականացվող նաև պետության հարկային քաղաքացիության ոլորտում, որն ուղղված է հարկադրման կատարելագործված համակարգի կառուցմանը, վարչարարության գործիքների մեղմացմանն ու արդյունավետության բարձրացմանը, հարկային հաշվարկ-հաշվետվորությունների և այլ փաստաթղթերի ներկայացման միջոցների արդիականացմանը:

Հարկադրման համակարգի արդյունավետության ապահովում անհնար է առանց հարկային իրավախախտումների և հանցագործությունների բացահայտման համար:

Մանը, հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորությունների ժամանակն գանձնանն ուղղված միջոցառումների նպատակադրդված և համակարգված իրականացման:

Ըքեական իրավունքի գիտության մեջ հարկային հանցագործությունների վերլուծությունը միշտ զուգորդվել է տնտեսական և ֆինանսական ոլորտում իրականացվող հանցագործությունների դասակարգման հետ: Հարկային հանցագործությունների հանցավոր ուսնձգության ոլորտն ունի կողմնորոշչ նշանակություն, քանի որ հանդես է գալիս որպես տվյալ խճիքի հանցավոր արարթների որակման կարևոր հատկանիշ: Տեսակային օբյեկտով տնտեսական հանցագործությունների համակարգային վերլուծության արդյունքում որոշ մասնագիտներ գտնում են, որ, հանցավոր ուսնձգության անմիջական օբյեկտից ելնելով, դրանք կարող են բաժնավել որոշակի ենթախճքերի՝ ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեության, դրամավարկային շրջանառության և պետության ֆինանսական ու հարկարյութետային գործունեության ուղղությունում իրականացվող հանցագործությունները:¹

Ֆինանսական հանցագործություններն արդեն բավական երկար ժամանակ համարվում են տնտեսական հանցագործությունների տարատեսակներից մեկը և, որոշ մասնագիտների կարծիքով, հարկային հանցագործությունները, իրենց տեսակային օբյեկտից ելնելով, ևս դասվում են ֆինանսական և ֆինանսա-բյուջետային ոլորտում իրականացվող հանցագործությունների շարքին՝ դրանք անվանելով հարկերի ու մաքսային վճարների վճարման կարգի դեմ ուղղված հանցագործություններ, որտեղ, որպես հանցավոր ուսնձգությունից պահպանվող օբյեկտ, հանդես են գա-



լիս պետության ֆինանսական շահերը: 2,3,4

Օրինակ՝ Ի.Ա.Կվիավելին, որպես տնտեսական հանցագործությունների առանձին տեսակ, առանձնացնում է ֆինանսական ոլորտում իրականացվող հանցագործություններ՝ հարկերի և մաքսային վճարների վճարումից չարամտորեն խուսափելը:⁵ Բ.Վ.Վոլժենինը, մանրամասն ուսումնավիճակով ֆինանսական հանցագործությունների օրյեկտը, առանձնացնում է հարկերի և պետական արտաքիութեային ֆոնդեր կատարվող ապահովագրական վճարների վճարման սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունները: Օ.Գ.Կարպովիչը գտնում է, որ ֆինանսական հանցագործությունները սեփականության հարաբերություններին ունեցող հանցավոր արարքներ են, որոնք զարգանում, փոփոխվում և դադարում են երկրի ֆինանսական համակարգի մեջ: ⁶

Գոյություն ունի նաև մեկ այլ հետաքրքիր տեսակետ, համաձայն որի՝ ֆինանսական հանցագործությունները ֆինանսական անվտանգության բնագավառում իրականացվող հանցագործություններ են, և դրանց համապատասխանում է բնակա-իրավական նորմերի որոշակի համակարգ, որն ուղղված է այդ բնագավառի հասարակական հարաբերությունների պաշտպանությանը:⁷ Պետք է ընդունել, որ ֆինանսական, այդ դվիմ նաև՝ հարկային, հանցագործությունը վատրարացնում է պետության ֆինանսական արորելմները և, դրա հետ կապված, հանդիսանում է պետության ֆինանսական անվտանգության առավել էական սպառնալիքներից մեկը:

Վերոգրյալից պարզ է դատնում, որ տվյալ խմբի հանցագործությունների օրյեկտիվ վերլուծությունից նկատվում է որակման տնտեսական և իրավական հատկանիշների համախանում: Հնարավոր չէ բացառել, որ հարկային հանցագործությունները մի կողմից ուղղված են այն հարաբերությունների դեփորմացմանը, որոնք առաջանում են պետական և համայնքային սեփականության իրավունքի իրացման արդյունքում, իսկ մյուս կողմից՝ միջնորդավորված կերպով, պետության ամրող ֆինանսական համակարգի փլուզմանը:

Իրավահարաբերությունների սուբյեկտների տցիալական կապերը և բնանց օրինական շահերը հասարակական հարաբերություններին հաղորդում են որոշակի ուղղվա-

ծություն և քոյլ են տալիս առավել հստակ որոշել հանցավոր ուսնձգության օրյեկտը: Ելնելով նշվածից՝ առաջարկվում է հարկային հանցագործությունների օրյեկտը համարել բարդ կառուցվածք ունեցող, քանի որ դրանց հետևանքով վճառ է հասցվում ոչ միայն պետության հարկային և ֆինանսարյուջետային համակարգին, այլ նաև՝ պետության ֆինանսական շահերին:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գործող քրեական օրենսգրքում հարկերը, սուբյեկտը կամ պարտադիր վճարումները վճարելուց շարամտորեն խուսափելու հանցագմբը (հոդված 214) տեղադրված է 22-րդ գլխում՝ «Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ»:⁸ Տվյալ գլուխ անվանումն իրենից ներկայացնում է բարականին լայն նշանակությամբ ձևակերպում և մատնանշում է հասարակական կյանքի առավել ծավալում ոլորտը: Համաձայն մասնակիության գրականության մեջ գերիշխող տեսակետի՝ տվյալ գլխում ընդգրկված հանցագործությունների տեսակային օրյեկտ են հանդիսանում այն հասարակական հարաբերությունները, որոնք առաջանում են բնականն տնտեսական գործունեության ընթացքում՝ նյութական բարիքների արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման, ինչպես նաև՝ ծառայությունների մատուցման բնագավառում, իսկ ինչ վերաբերում է հարկերը, սուբյեկտը կամ պարտադիր վճարումները վճարելուց շարամտորեն խուսափելուն, ապա դրա անմիջական օրյեկտը պետության ֆինանսական և հարկային համակարգերի բնականն գործունեությունն ապահովող ի հանցագործությունները և առարկա կապը վճարմները.⁹

Համաձայն «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի՝ հարկը պետական և հասարակական կարիքների բակարարման նպատակով համապատադիր և անհատույց վճար է, որը գանձվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից (այդ դվիմ՝ ոչ ռեգիստրատ ֆիզիկական անձանցից, օտարեկրյա իրավաբանական անձանց մասնաճյուղերից, ներկայացուցություններից), իիմնարկներից,



ԼՂՀ դատական իշխանություն

տեղական ինքնակառավարման մարմիններից՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով, չափերով և սահմանված ժամկետներում:

Համաձայն «Պետական տուրքի մասին» Լեռնային «Նարարադի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի՝ Լեռնային «Նարարադի Հանրապետությունում պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ սույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Լեռնային «Նարարադի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար:

Ինչ վերաբերում է պարտադիր վճարումներին, ապա դրանց տակ պետք է հասկանալ պետական տարրեր ծրագրերի ֆինանսավորման նպատակով պարտադիր կարգով զանձվող միջոցները:

Քննարկվող հանցագործությունների քննության ժամանակ անհրաժեշտ է պազգել օրյեկտիվ կողմի այնպիսի հատկանիշներ, որոնց միջոցով բնութագրվում են հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարումների վճարումից խուսափելու եղանակները: Դրանք կարող են արտահայտվել ինչպես գործողությամբ՝ հարկային հաշվետվությունների, հաշվարկների, հայտարարագրերի և այլ փաստարդերի մեջ, որոնց ներկայացումը հարկային օրենսդրության համաձայն պարտադիր բնույթ է կրում, ակնհայտ խեղաքարված տվյալներ մտցնելով, այնպես էլ անգործությամբ՝ բվարկված փաստարդերի չներկայացնամբ: Բացի այդ, անհրաժեշտ է պարզել նշանակած փաստարդերի չներկայացման կամ այդ փաստարդերում կեղծ տվյալներ մտցնելու ժամանակահատվածներում իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերի կողմից ծավալված ֆինանսատնտեսական գործունեության փաստացի արդյունքները (իրացման ծավալներ, հարկման օրյեկտներ և այլն), ինչը պայմանավորված է բավականին լայն մասշտաբի քննչական և օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացմամբ, մասնավորապես՝ անհրաժեշտ տեղեկություններ պարունակող փաստարդերի և այլ աղբյուրների գտնվելու վայրի պարզում և դրանց առգրավում, այդ

իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերի կոնտրագենտների հայտնաբերում և նրանց մոտ համապատասխան ուսումնասիրությունների ու ստուգումների իրականացում և այլն: Նշված միջոցառումների ժամանակին և նպատակառողջված իրականացումը բոլով է տախու վերհանել և պարզել արարքի իրական համգամանքները, ինչն էլ հանգեցնում է արարքին ճիշտ և բազմակողմանի իրավական գնահատական տարրուն:

Օրենսդրությունը հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարումները վճարելուց խուսափելու համար պատասխանատվությունն է նախատեսում միայն այն դեպքում, եթե այն կատարվել է խոշոր կամ առանձնապես խոշոր չափերով և, համաձայն Լեռնային «Նարարադի Հանրապետության քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 3-րդ մասի՝ խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատճիկից տասնինգիսակարապատիկից չգերազանցող գումարը, իսկ առանձնապես խոշոր չափ՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի տասնինգիսակարապատիկը գերազանցող գումարը: Սակայն օրենսդրությունը սիմվոլ չի սահմանել տվյալ չափերի առաջացման ժամանակաշրջանները, ինչպես նաև այն, թե չափերը հաշվարկելիս հարկերը, տուրքերը կամ այլ պարտադիր վճարումները հաշվարկվում են մեկ ընդհանուր գումարով, թե առանձին-առանձին: Այս առումով, իմք ընդունելով «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասով, սահմանված պարբերությունը, այն է՝ «Հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերելի է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո», անհրաժեշտ է արձանագրել, որ, որպես քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված չափերի որոշման ժամանակաշրջանը, պետք է համարել հենց այդ ժամանակաշրջանը: Ինչ վերաբերում է այն հարցին, թե խոշոր կամ առանձնապես խոշոր չափերի՝ արդյո՞ք թերիաշվարկված գումարները պետք է դիտարկել առանձին-առանձին՝ ըստ հարկատեսակների, տուրքի կամ այլ վճարումների, ապա գոտնում ենք, որ



խնդիրը պետք է դիտարկել սուբյեկտիվ կողմից, այսինքն՝ հարկերը, սուբյեկտ կամ այլ պարտադիր վճարումները վճարելուց խուսափելով պետք է համարվի խոչըր կամ առանձնապես խոչըր չափերով կատարված ոչ միայն այն դեպքում, եթե անձը խուսափում է որևէ մեկ տեսակի հարկի, սուբյեկտ կամ այլ պարտադիր վճարման կատարումից, այլև եթե անձի միասնական դիտավորությամբ ընդգրկված է մի քանի հարկատեսակների վճարումից խուսափելը, որոնց գումարային արժեքը համապատասխանում է հոդվածով նախատեսված չափերից որևէ մեկին:

Հանցագործության ավարտ պետք է համարել հարկերի, սուբյեկտի կամ այլ պարտադիր վճարումների փաստացի վճարման, այլ ոչ թե խեղարյուրված տվյալներով համապատասխան փաստարդերի կամ այդ փաստարդերի համար հարկային օրենսդրությամբ նախատեսված ժամկետում չներկայացնելու օրը, այսինքն՝ եթե հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացրել խեղարյուրված տվյալներով հաշվարկ, հաշվետվություն կամ այլ փաստարդուր կամ նշանակած ժամկետում չներկայացնելու օրը, այսինքն՝ եթե հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացրել խեղարյուրված տվյալներով հաշվարկ, հաշվետվություն կամ այլ փաստարդուր կամ նշանակած ժամկետում չներկայացրել է նոր՝ ճշշտված հաշվարկ, հաշվետվություն կամ այլ փաստարդուր կամ լրիվությամբ վճարել է հարկերը, սուբյեկտ կամ այլ պարտադիր վճարումներ՝ այդպիսով կամավոր և վերջնական հրաժարվելով հանցագործությունը մինչև վերջ հասցնելուց, ապա քննարկվող հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները նրա արարում բացակայում են:

Սուբյեկտիվ կողմից հանցագործությունը բնութագրվում է ուրուակի դիտավորությամբ, այսինքն՝ հանցավորը գիտակցում է, որ համապատասխան փաստարդերում ակնհայտ խեղարյուրված տվյալները մտցնելու կամ դրանք օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չներկայացնելու միջոցով խուսափում է խոչըր կամ առանձնապես խոչըր չափի հարկեր, սուբյեկտ կամ այլ պարտադիր վճարներ վճարելուց, նախատեսում և ցանկանում է այդ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային օրենսդրությունը պատասխան հարկային օրենսդրությունը պատասխանական պատասխանավորություն է նախատեսում միայն այն դեպքերում, եթե անձը հարկեր, սուբյեկտ կամ այլ պարտադիր վճարներ վճարելուց խուսափել է հաշվետվություններում, հաշվարկներում, հայտարա-

խանատվություն է նախատեսում ինչպես այն իրավախախտումների համար, որոնք կատարվել են դիտավորությամբ, այնպես էլ անզգուշությամբ, այսինքն՝ հարկային մարմնի աշխատակիցների կողմից իրականացված սուբյեկտների արդյունքում հայտնաբերված իրավախախտումների համար հարկային պարտավորություններ հաշվարկվում են և այն դեպքերում, եթե հարկ վճարողը գիտակցաբար բույլ է տվել հարկերի կամ այլ պարտադիր վճարների բերհաշվարկ, և այն դեպքերում, եթե հարկերի կամ այլ պարտադիր վճարների բերհաշվարկն օրենքի չիմացության կամ հաշվապահական սխալի հետևանք է: Իսկ ահա գործող քրեական օրենսդրությունն օրինակի մեղայնացում չի բույլատրում, այդ հոկ պատճառով հարկային հանցագործությունների վերաբերյալ գործերով անհրաժեշտ է պարզել կոնկրետ անձի մեղքի չափը տվյալ հանցագործության մեջ: Եվ միշտ չէ, որ հարկային մարմինների կողմից բացահայտված հարկերի կամ այլ վճարների բերհաշվարկման փաստերը քրեռուն պատմելի են:

Հանցագործության սուբյեկտը հասուիկ է, այն կարող է լինել տասնվեց տարին լրացած, մեղսունակ ֆիզիկական անձը, որի վրա դրվագ է հարկերի կամ այլ վճարների հաշվարկման և վճարման, ինչպես նաև՝ օրենսդրությամբ նախատեսված կարգով հաշվետվությունների, հաշվարկների, հայտարարագրերի կամ այլ փաստարդերի ներկայացնան պարտականություն՝ իրավաբանական անձի տնօրեն, զիասվոր հաշվապահ, անհատ ծեռնարկատեր և այլն: Այն դեպքերում, եթե այլ անձի միջոցով փաստացի ծեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձը խուսափում է հարկեր, սուբյեկտ կամ այլ վճարներ վճարելուց, ապա նրա արարքը պետք է որպակի որպես կատարող, իսկ մյուսին՝ որպես օժանդակող, եթե նա գիտակցում էր, որ օժանդակում է տվյալ հանցագործության կատարման:

Ինչպես տեսնում ենք, Լեռնային Ղարաբաղ Հանրապետության քրեական օրենսդրությունը քրեական պատասխանավորություն է նախատեսում միայն այն դեպքերում, եթե անձը հարկեր, սուբյեկտ կամ այլ պարտադիր վճարումներ վճարելուց խուսափել է հաշվետվություններում, հաշվարկներում, հայտարա-



ԵՊՀ դատական իշխանություն

բազրելում կամ այլ պարտադիր ներկայացման ենթակա, փաստարդերում ակնհայտ խեղարյուրված տեղեկություններ մտցնելու կամ նշված փաստարդերը օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չներկայացնելու միջոցով։ Սակայն պրակտիկայում հաճախ հանդիպում են դեպքեր, երբ անձը օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան նարմիններ է ներկայացնում վերը նշված փաստարդերը, իր կողմից իրականացված ձեռնարկատիրական գործունեության իրական արդյունքներով հաշվարկում է համապատասխան հարկերը կամ այլ վճարումները, սակայն դրանց վճարումը չի իրականացնում՝ ունենալով դրանց վճարման համար բոլոր հնարավորությունները։ Ուստասանի Դաշնության քրեական օրենսգիրը լուծել է նշված խնդիրը և քրեական օրենսգրքի 199.2-րդ հոդվածում պատասխանատվություն է նախատեսել նաև այս արարթերի համար, երբ բարցման են իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջ պատկանող դրամական միջոցները, որոնց հաշվին պետք է վճարվեին օրենսդրությամբ սահմանված կարգով և շափերով հաշվարկված հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարները¹⁰։ Տվյալ դեպքում ևս անձի նպատակը հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց խոսափելն է, սակայն այս դեպքում այն իրականացվում է դրանց վճարման համար նախատեսված միջոցների բարցմանը։ Լեռնային Հարաբաղի Հանրապետության քրեական օրենսգիրը, ինչպես արդեն նշվել է, նման արարթերի համար քրեական պատասխանատվություն չի նախատեսում և այդ հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական և վարչական իրավունքի նորմերի միջոցով։ Ինչը շատ հաճախ ցանկալի արդյունք չի արձանագրում։ Մեր կարծիքով, քրեական օրենսգրքում նման հոդված սահմանելը մեր պայմաններում պահանջված է, քանի որ դիսպոզիցիայում նկարագրված արարթերը ևս վերջնական հաշվով հանգեցնում են հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարումների թերվճարմանը կամ չվճարմանը, ինչն էլ իր հերթին ազդում է պետության ֆինանսական կայունության վրա, և որևէ տարբերություն չպետք է դրվի հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները՝ դրանք չհաշվարկելու կամ թերհաշվարկելու

միջոցով չվճարելու, հարկերի, տուրքերի կամ պարտադիր այլ վճարումների վճարման համար առկա միջոցները բարցնելու միջոցով՝ նույն արդյունքի հասնելու միջև։

Պետք է արձանագրել, որ հարկային ոլորտում բույլ տրված իրավախախումների հայտնաբերումն ու կատարված հանցագործությունների ժամանակին բացահայտումը և դրանց ճիշտ քննությունը նպաստում է ոչ միայն տվյալ ոլորտի հանցագործության նվազմանը, այլ նաև պետության հարկաբյուջետային քաղաքականության նպատակաւորդիված իրականացմանն ու առանձին տնտեսական գործունեության իրականացման համար հավասար պայմանների ապահովմանը։

1. Уголовное право России: практический курс// под общ. ред. А.И.Бастрыкина; под науч. ред. А.В.Наумова. - М.Волтерс Клювер, 2007г., էջ 808:

2. Проблемы квалификации преступлений: лекции по спецкурсу. Н.Ф.Кудрявцева// науч. ред. В.Н.Кудрявцева.-М.Городец, 2007г. էջ 336:

3. Российское уголовное право: учебник// в 2м. под ред. Л.В.Иногамовой-Хегай, В.С.Комисарова, А.И.Рарога. - 2-е издание. М. ТК Велби, Проспект, 2007г. (Т.2. Особенная часть), էջ 664:

4. Уголовное право. Особенная часть: учебник// под ред. Л.В.Гаухмана, С.В.Максимова. - 2-е издание. - М.Эксмо, 2005г. сз 704:

5. Система хозяйственных преступлений. И.А.Кленетцкий// - М. Статут, 2005г.- էջ 572:

6. Понятие, признаки и виды финансового мошенничества. О.Г.Карпович // Юридический мир. - 2010г. N8. էջ 38-40:

7. К вопросу о месте преступлений в сфере обеспечения финансовой безопасности в системе Особенной части УК РФ. О.Ш.Петровсян// Юридический мир. - 2011г. N1. էջ 8:

8. Լեռնային Հարաբաղի Հանրապետության քրեական օրենսգիրը:

9. Հայապահի Հանրապետության քրեական իրավունքը, Հայուն մաս. Գ.Ս.Ղազինաևի խմբ. Երևան 2009թ.- ԵՊՀ իրավարակչություն, էջ 480-482:

10. Уголовный кодекс Российской Федерации: